— Բայց դու, սիրական քուրիկս, զրուցէ անգամ մը թէ ի՞նչ կրնաս ընել ինձ, որ կը պարծիս թէ զօրաւոր ես:

— Հա՛, այդպէս անուշ խոսէ, թատերական ձեւերդ մոռցի՛ր, երբ ինձ հետ ես: Աղուէս, առիւծ մի՛ ձեւանար, կատու, օձու պէս մի մռնչէր. քու հին արհեստդ ձեռք ա՛ռ, սողուն, գետինը գալարիր որպէսզի թունաւորես:

— Ես չեմ ուրանար թէ անզգամ մ'եմ, բայց դուն էլ, Անկելինայ, ինձ արժանի քոյր ես:

— Այո այս նաեւ ճշմարիտ է, միայն հոն է մեր երկուսին տարբերութիւնը, որ դու ի բնէ անպիտան ու վատ ծնէր ես, իսկ ես ինչ որ անզգամութիւն ունիմ քու չարութեանդ հետեւանքն է, եւ վտանգի առջեւ գոնէ անխռով քաշութիւն ունիմ:

— Ո՛վ իմ սիրելի քոյրս ինչչա՛փ ազնիւ յատկութիւնք ունիս, ինչչա՛փ առաքինութեանց եւ մոլորութեանց խառնուրդ ես…

— Լռէ՛, թո՛ղ ձեռքս, մի՛ հպիր ինձի, հեռո՛ւ:

— Կը վախես ինձմէ՝ քու մէկ հատիկ եղբօրմեդ:

— Թումայ, լաւ համոզուի, որ քեզմէ չեմ վախեր, եւ ինչո՞ւ, գիտե՞ս:

— Ինչո՞ւ:

— Ստութեան, խաբէութեան սատանայ, չգիտե՞ս. ես քու մտքիդ մէջինը գիտեմ, եւ դու չդիտե՞ս: Լաւ, զրուցեմ, որ գոհ լինիս: Ես քեզ պէտք եմ, առանց ինձ դու ոչինչ ես, այդ բանին համար սեպենք թէ վաղը դու յաջողիս զիս թունաւորել եւ ես մեռնիմ, ո՛վ քեզ պիտի պաշտպանէ. ահա միմիայն պատճառը, որ ես իրաւունք ունիմ քեզմէ չի վախելու: Դեռ երէկ կայսրը կ'ըսէր ծիծաղելով. «Եղբօրդ պէս վատթար զինուոր եւ անամօթ գող հատ մ'էլ չի կայ բոլոր կայսրութեան մէջ: Քու սիրոյդ համար միայն կարելի է համբերել, եթէ ոչ տասն անգամ կախաղանի դատապարտուած էր մինչ հիմա»:

Իրաւ, այդպէ՞ս ըսաւ կայսրը:

— Անամո՛թ, դու կը ծիծաղիս այս լսելով, եւ ես ամաչեցի: Տէ՛, գլուխս ցաւ մտաւ, շատ խօսեցայ հետդ եւ կիրք էլ ելայ, որ չէր արժէր: Ահա քեզի կը պատուիրեմ կրկին եւ կրկին. ոչ մարդու առջեւ, ոչ առանձին այդ հայ աղջկան մազին,